«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ՀԵՐՈՍԱՎԵՊԻ ԾԻՍԱԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Սասնա ծռեր» հերոսավեպը ըստ լեզվաբարբառային և գեղարվեստական հատկանիշների բաժանվում է երեք տիպաբանական խմբի՝ Մշո, Մոկաց, Սասնա: Մոկաց պատումներն աչքի են ընկնում բանաստեղծական բացառիկ հատկանիշներով, միաժամանակ օժտված են Ողորմիքի մի ինքնատիպ նախերգանքով, որը իսպառ կամ գրեթե իսպառ բացակայում է Մշո և Սասնա պատումներում:

Դառնա՛նք զողորմին տը տանք Սանասարին: Զըմե՛ն:
Ողորմին տը տանք Բաղդասարին.
Դառնա՛նք զողորմին տը տանք էն Մեծն Միհերին: Զըմե՛ն:
Ողորմին տը տանք Զենով Հովանին.
Դառնա՛նք զողորմին տը տանք Թըռլան Դավթին: Զըմե՛ն:
Ողորմին տը տանք Պըզտիկ Միհերին.
*Դառնա՛նք զողորմին տը տանք Քաջռուն Ճ*ղ Դեղձուն Ծամին: Զըմե՛ն:*
*Ողորմին տը տանք Խանդ*թ խաթունին.*
Դառնա՛նք զողորմին տը տանք Ճարպախար Քամին: Զըմե՛ն:
*Ողորմին տը տանք Բաթմանա Բ*ղին.*
*Դառնա՛նք զողորմին տը տանք Շիրին Անախուն Գ*հարին*[1]:*
(Սասնա ծռեր, հ. Ա, Զ պատում)

Ողորմիքում, ինչպես հայտնի է, ողորմություն է ցանկացվում էպոսի բոլոր հերոսներին, Սասնա տան մեծ ու փոքր բոլոր ներկայացուցիչների, ինչպես նաև վեպը լսող ունկնդիրների ծնողների հոգիներին: Երկու պատումներում Ողորմիքի ավանդությունը մերժվում է («չտամ ողորմի») հայրենի հերոսների թշնամու նկատմամբ:

---

[1] *Ողորմիքն առկա է «Սասնա ծռերի» հետևյալ պատումներում. 1) Սասնա ծռեր (հետայսու՝ ՍԾ), հ. Ա, Ա պատում (Նախո Քեռի), 2) ՍԾ, հ. Ա, Բ պատում (Խապոյենց Զատիկ), 3) ՍԾ, հ. Ա, Դ պատում (մի ուրիշ մոկացի), 4) ՍԾ, հ. Ա, Ե պատում (մոկացի Հովան), 5) ՍԾ, հ. Ա, Զ պատում (վիպասաց Հովակիմենց Ղազար, գրառող Արտաշես Աբեղյան), ՍԾ, հ. Ա, Ը պատում (մոկացի Վարդան), 6) ՍԾ, հ. Ա, Ժ պատում (մոկացի Վարդան Մուխսի Բազիկյան), 7) ՍԾ, հ. Ա, ԺԲ պատում (Մանուկ Հարությունյան), 8) ՍԾ, Ա, ԺԳ պատում (շատախցի Մկրտիչ Հարությունյան), 9) ՍԾ, հ. Ա, ԺԵ պատում (շատախցի Գրիգոր), 10) ՍԾ, հ. Ա, ԻԱ պատում (գավաշցի Մարգարիտ Մարգսյան), 11) ՍԾ, հ. Ա, ԻԴ պատում (հայոցձորցի Կազարյան Թառոն), 12) ՍԾ, հ. Բ, I մաս, Երևան, 1944, Գ պատում (Դատկու Մոճկոնց գյուղացի Ավետիս Մարտիրոսյան), 13) ՍԾ, հ. Բ, II մաս, Երևան, 1951, ԺԳ պատում (վիպասաց այրարատցի Մուրադ Հովսեփյան, գրառող Մարգիս Հայկունի), 14) ՍԾ, հ. Բ, II մաս, ԺԶ պատում (ոմն վանեցի):*

Այդ կերպ վեպի գործող անձինք սկզբից իսկ հանդես են բերված իբրև երբևէ ապրած ու գործած իրական նախնիներ, և տվյալ վիպասանությունը դրվում է ու դիտվում որպես այդ հանգուցյալների գործած պատմություն, ճիշտ այնպես, ինչպես ժողովրդական սգերգերին հատուկ վիպական հուշապատումների այն միջուկը, որ կազմում է սգերգերի բուն բովանդակությունը: Սգերգերն սկսվում են իրենց բնորոշ ավանդական բանաձևերով (իմա՞լ էնիմ, ՝ւ(ինչխ էնիմ և այլն) և ավարտվում դրանցով՝ ընդելուզելով հանգուցյալի(ների) կյանքից վերառած և բանաստեղծական չափազանցումների ենթարկված վիպական հուշապատումները: Ողորմիք-նախերգանքները շատ նման են ժողովրդական սգերգերին, այն տարբերությամբ միայն, որ սգերգերը նվիրված են նորոգ հանգուցյալներին, ուղեկցվում են հիշյալ կրկնակ բանաձևերով, մինչդեռ ժողովրդական վեպում՝ վաղ անցյալում մեռած և այժմ հիշատակը սրբագործող Ողորմիքի բանաձևերով:

Ողորմիքի նախերգը նախնիների հիշատակի («հիշատակ մեռելոց») ծիսական արարողության վիպական մատուցումն ազդարարող մի նախաբան է, որով սկսվում է նախնիների հերոսական ակտիվ արարքների պատմությունը:

Մեռելոց ողբերգերում հանգուցյալի կյանքի դիպվածները ներկայացվում էին խիստ թռուցիկ, բայց լուրջ չափազանցումներով, այժմ մեռելոց հիշատակի վիպական պատմություններում հանդես են բերվում վիպական լայն դիապազոնով, վիպասանական նոր որակով:

Երկու դեպքում էլ գործ ունենք նախնիների պաշտամունքի ծիսական արարողությունների հետ. մեկը՝ նրանց մահվան ու կոծի, մյուսը՝ նրանց հիշատակը հավերժացնելու և վիպականացնելու հետ: Ծիսական այս նոր իմաստաբանությամբ ժողովրդական վեպը դառնում է սրբազան նախնիների հերոսական ակտիվ արարքների մի թատերաբեմ՝ նրանց ապրումների ու կրքերի անկեղծ բախումներով, վիպական կերպավորման բարձր ու անմիջական արվեստով իրագործված:

Վերևում արդեն նշվեց, որ 14 Ողորմիքից երկուսում ողորմություն չի կամեցվում վեպի հերոսների և Սասնա թշնամի Մսրա մելիքին («Օղորմի չը տանք Մըսրա Մելիքին», Մուրադ Հովսեփյանի (ՍԾ, հ. Բ, II մաս, ԺԳ պատում) և Արտաշես Աբեղյանի գրառած պատումներ (ՍԾ, հ. Ա, Զ պատում): Մինչդեռ շատախցի Մկրտիչ Հարությունյանի պատումում (ՍԾ, հ. Ա, ԺԴ պատում) ողորմի է տրվում և՛ Մեծ, և՛ Փոքր Մսրա մելիքներին («Օղորմին տանք Մսրա Մելիքին, Օղորմի տանք Մըսրա Մելիքի տղա Մելիքին»)՝ այն ենթադրելի հիմունքով, թե Մեծ Մսրա Մելիքը Մեծ Միհերի բարեկամն էր, իսկ Փոքր Մսրա Մելիքը՝ Դավթի խորթ եղբայրը:

Ողորմիքի սրբազանությունը և օրհնաբանական բնույթն արտահայտվում է հետևյալ սկսվածքով. «Օրհնյալ բարերար Աստված, խնամք շատ էր մեծ թագավորուն (ՍԾ, հ. Ա, ԻԴ պատում, Կազարյան Թառռ) կամ՝ «Օրհնյալ է Աստված, քու խնամքն է շատ» (ՍԾ, հ. Բ, II մաս, ԺԶ պատում – Վան):

«Ա՜խ, կուտամ զողորմին, կուտամ զողորմին,
Ախ, Դավիթ թագավորին, ախ, Դավիթ թագավորին,

Ախ, կուտամ զողորմին էն Մսրա Մելիքին, ախ, Մսրա Մելիքին»

(ՍԾ, հ. Բ, I մաս, Գ պատում, Դատկու Մոճկոնց գյուղացի Ավետիս Մարտիրոսյան):

Վարդան Մուխսի Բազիկյանի վկայությամբ Ողորմիքն ասվել է վեպի յուրաքանչյուր ճյուղի սկզբից (տե՛ս ՍԾ, Ա, Ժ պատում): Այստեղից էլ արդարանում է մոկացի այն վիպասացների բանաձևված ասույթը, թե՝ «Էկանք ճյուղե ճուղ, հասանք վըր Դավթի կամ Մհերի ճյուղին» (ՍԾ, հ. Ա, Մուխսի Բազիկյանի պատումներ): Արտաշես Աբեղյանի գրառած պատումի նախերգի հատվածն ավարտվում է «զըմեն» (= ամեն) բառով, որը վկայում է քրիստոնեական օրհնաբանության ավարտի առկայությունը:

Այլ կերպ ասած՝ Մոկաց պատումների ճնշող մեծամասնությունը ձևով նմանվում է ժողովրդական սգերգերին, առանց սակայն վերջիններիս յուրահատուկ քնարական շեշտադրության, այլ այդ վիպական ժանրին բնորոշ վեհությամբ ու հանդիսավորությամբ[2]:

Այսպես, տեսնում ենք, որ «Սասնա ծռեր» հերոսավեպի տիպաբանական խմբերից մեկում, որն աչքի է ընկնում ոչ միայն իր բանաստեղծական ինքնատիպ հատկանիշներով, այլև առասպելաբանական մոտիվների հարստությամբ, Ողորմիք-նախերգանքը դրված է ծիսական որոշակի կաղապարի մեջ, այն է՝ անցած-գնացած հերոսների մեռելոց հիշատակի օրհնաբանական ծիսերգի հետ, որն ամենուրեք երգվում է վեհ ու հանդիսավոր հնավանդ մեղեդիով:

Թե՛ ծիսական նախերգանք ունեցող և թե՛ նախերգանքազուրկ պատումներում (նկատի ունենք նաև հերոսավեպի մնացած երկու տիպաբանական խմբերը) վիպվում են հերոսների դյուցազնական արարքները, որոնք գեղարվեստորեն կերպավորվել են հիմնականում երեք հնավանդ առասպելների հիման վրա: Հերոսավեպի սյուժետային հիմքն են կազմում սրբազան երկվորյակների, ամպրոպային աստծո կամ դյուցազնի, Միհր կամ Միթրա աստծո առասպելական սյուժեները, որոնք հարակցվել են միմյանց թեմաների ընդհանրությամբ, վիպական վերամշակմամբ և պատմական ավանդությունների հետ սերտաճմամբ:

Առասպելաբանական այդ տարբեր սյուժեների միավորման համար մեծ դեր է հատկացվել ջրի նախնադարյան պաշտամունքին: Վեպը սկսվում է երկվորյակների առասպելով, վերջինիս երկվորյակ եղբայրների նախամայրը տիեզերքի ջրային տարերքն անձնավորող մայր դիցուհի է՝ Ծովինար, Ծովյալ կամ Ծովիան խաթունը՝ անունը բաղադրված հայերեն «ծով» բառից: Ժողովրդական զրույցներում Ծովինարը ամպրոպային ոգի է, ձիավոր հեծյալ, որ ամպրոպի ժամանակ հրեղեն ձիով շրջում է ամպերի մեջ, կայծակ ու որոտ արձակում՝ անձրև կամ կարկուտ ուղարկելով երկիր: Ծովինարը մտել է հերոսավեպ, պատմականացել, դարձել հայոց թագա-

---

[2] *Ըստ մոկացի վիպասաց Մանուկ Հարությունյանի՝ պատումի առաջին տողերի ծանուցման հերոսավեպի այս ծիսական օրհնաբանական նախերգանքը դրվել է Մեծ Մհերի պահանջով. «Տավըթի խեր՝ Մեծ Մհեր Սանասարի տղեն ի, Տավթի խեր Մեծ Մհեր ըսում ի՝ Ով մեր պատմութեն ասի, մի օղորմի տա (ՍԾ, հ. Ա, ԺԲ պատում, էջ 407): Այստեղից հետևում է, որ էպոսի օրհնաբանական ծիսական նախերգանքը կատարվել է վիպական հերոսի ցանկությամբ, դրանով շեշտվում է վիպական հերոսի կամքի սրբազանության ավանդականությունը, որը պարտադրվում է վիպասաց սերունդներին:*

վորի դուստր: Ծովից բխող աղբյուրից խմած երկու բուռ ջրից հղիանում է և ծնում երկվորյակ դյուցազուններ: Ջուրը դառնում է ժառանգորդային կարևոր սկզբունք. Սանասարն իր դյուցազնական զորությունը, հրեղեն ձին, թուր կայծակին ձեռք է բերում ծովի հատակից՝ այնտեղ բխող Կաթնաղբյուրից ջուր խմելով, երկվորյակներն իրենց տունը շինում են հզոր առվակի ակունքի վրա, ունենում հզոր ժառանգ: Սանասարի որդի Մեծ Մհերը մարտից առաջ լողանում է հայրենի Կաթնաղբյուրի ջրով, նույնը կատարում է նրա որդի Դավիթը, որն անգամ սպանվում է ջրի մեջ լողանալիս:

Վեպում արտացոլված հնագույն հավատալիքներ են աստղահմայությունը կամ աստղագուշակությունը՝ կապված հերոսների ճակատագրերի փոփոխության հետ (Սասնա աստղ Դավիթ, Մսրա աստղ Մելիք) հոգեպաշտությունը (հոգեհարցում): Փոքր Մհերը հոր ու մոր գերեզմաններից օգնություն է խնդրում իր սրտահույզ երկխոսությամբ, նախնադարյան ծիսական կենցաղի առանձին երևույթներ (մարդու զոհաբերում, մարտից առաջ Դավթի ծիսական լոգանքը քառասուն անծին երինջների արյան մեջ):

Այս նախաքրիստոնեական հին հավատալիքներից հայոց հերոսավեպում զգալի տեղ են գրավում բուն քրիստոնեական և ժողովրդաքրիստոնեական ծիսական տարաժամանակյա սովորույթները, հավատալիքները, որոնք գոյակցվել են հեթանոսական կրոնական տարրերի հետ համաժամանակեցման սկզբունքով և ստեղծել են կրոնաբարոյական որոշակի միջավայր: Դրանցից են հանգուցյալ հարազատների համար ժամ անելը կամ պատարագ մատուցելը, որ ուղեկցվում է ծիսական հացկերույթի մատուցմամբ, մեռելների հոգու փրկության համար սուգ պահելը և սգահան լինելը (Մեծ Մհերի մահվան առիթով սասունցիների սուգը), հերոսների՝ եկեղեցում ճգնելը, տակավին միջնադարից վկայված կրոնաազգային խտրականության դրսևորումը այլազգի-այլադավանների նկատմամբ (հայ-տաճիկ կամ խաչապաշտ-կռապաշտ), երդմնազանցությունը և պատիժը (Դավիթ):

Հայագիտության մեջ, սկսած Ասատուր Մնացականյանից, կարծիք է հայտնվել երկվորյակներ Սանասարի և Բաղդասարի համեմատության ու ընդհանրության մասին «Թուխ մանուկներ» կոչված հինավուրց, բայց քրիստոնեացած ժողովրդական սրբերի հետ: Իրավացիորեն նկատված է, որ հատկապես կանանց միջավայրում այդ մանուկներին համարել են իրենց երբեմնի ապրած ու գործած նախնիներ, և ողորմի է կամեցվում նրանց հոգիներին: Ինչպես հունական աշխարհում, այնպես էլ Հայաստանում, այդ երկվորյակներին հատկապես կանայք են համարել մեր երբեմնի ապրած հեթանոս նախնիներ և կրկնել «տանք ողորմի մեր նախնյաց հոգուն»[3]: Այստեղից պարզ է դառնում այն ընդհանրությունը, որ գոյություն ունի Մոկաց պատումների ողորմի-նախաբանների և Թուխ Մանուկներին ուղղված օրհնաբանական խոսքերի միջև:

Վեպի պատմական հիմքով հնագույն ճյուղը առաջինն է՝ Սանասարի և եղբոր վիպաշարը, որը հիմնված է սրբազան երկվորյակների հնօրյա առասպելի վրա՝ վի-

---

[3] *Տե՛ս Ա ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. «Թուխ մանուկներ» հուշարձանների մասին.– ՊԲՀ, 1976, № 2, էջ 183:*

պական դրվագների բազմապիսի հարակցումներով: Դա Սասնա դյուցազնական տան հիմնադրման վիպական պատմությունն է՝ իր երկվորյակ ներկայացուցիչներով: Սա իր վիպական բաղադրությամբ առհասարակ դասական սկզբնամաս է՝ բնորոշ բուն հերոսավեպերին:

Երկրորդ բաղադրիչը ամպրոպային կռվի առասպելաբանական սյուժեներն են՝ խիստ բնորոշ հնդեվրոպական և հայկական առասպելաբանության՝ դրսևորված հատկապես վեպի 3-րդ՝ Դավթի ճյուղում, մասամբ նաև մնացած ճյուղերի վիշապամարտի դրվագներում: Դավիթը հանդես է գալիս որպես ամպրոպային աստված կամ դյուցազն, որը կռվում հաղթում և սպանում է իր խորթ եղբայր հրեշային Մսրամելիքին և աշխարհն ազատում նրա կործանարար սպառնալիքից[4]:

Իսկ վերջին բաղադրիչը Միթրա-Միհրի առասպելաբանական դրվագները՝ դրսևորված 2-րդ և 4-րդ ճյուղերում, այն է՝ Մեծ Միհրի և Փոքր Միհրի վեպերում, մասնավորապես Մեծ Միհրի՝ առյուծ, սև եզ սպանելու, Մսրամելիքի հետ դաշինք կնքելու, Փոքր Միհրի թափառումների և Վանա ժայռում փակվելու վիպական մոտիվներում:

Այսպես, տեսնում ենք, որ հայոց դյուցազնավեպի առասպելաբանական սխեմայի հիմքերն են կազմում հիշյալ ճյուղի առասպելները, որոնք հարակցվելով միմյանց, կառուցվածքային մի բարդ համակցության, որտեղ վիպական երկվորյակները դարձել են դյուցազնական նախնիներ, որոնց սերունդները դարձել են Սասնա դյուցազնական տան ժառանգորդները՝ միմյանց հաջորդող հերոսների երեք սերունդներ՝ Մեծ և Փոքր Միհրների ճյուղերում Միհր-Միթրա աստծո վիպական կերպավորումներ և Դավիթը իբրև ամպրոպային աստծո կամ հերոսի վիպական կերպավորում՝ հոր և որդու տոհմային ժառանգորդության սկզբունքով:

Եվ այս բոլորը դրել են Ողորմիքի օրհնաբանական հիշատակությունը պատմող հանգուցյալ դյուցազն նախնիների ծիսական շրջանակներում՝ իբրև օրհնաբանական ավանդություններ:

Ծիսաառասպելաբանական այս նախնական հենքի վրա, հերոսավեպի հետագա զարգացման պատմական ընթացքում հետզհետե նստում են կրոնածիսական նոր խավաշերտեր, որոնք նորանոր գծերով շարունակում են հարստացնել էպոսի նախահիմքը՝ պատմական վիպասանության վայել տրամաբանական նորոգ հիմնավորումներով:

Իր ամբողջականության մեջ հերոսավեպը բոլոր չորս ճյուղերով վիպասացների և ունկնդիրների կողմից դիտվել ու ընկալվել է իբրև էթնիկական նախնիների իրական պատմություն, որի նկատմամբ գրեթե բոլոր վիպասացները տրամադրված էին մեծ ակնածանքով ու երկյուղածությամբ իրենց պատմած այդ վիպասանության վերաբերյալ և մեծ մեղք էին համարում դրա վրա իրենց կողմից որևէ հավելում կատարելը[5]: Ահա այս երկյուղածությունն ու խորին ակնածանքը հերոսավեպի նկատ-

---

[4] *Մանրամասնությամբ տե՛ս Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, ն ո ւ յ ն ի՝ Վիշապամարտը «Սասնա ծռերում».– ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1970, № 11, էջ 195:*

[5] *Տե՛ս Սասնա ծռեր, հ. Գ, պատումների գրառումը և հրատարակումը Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Երևան, 1979:*

մամբ Մոկաց պատումներում առաջ է բերում վեպի սրբազնացում և ծիսայնացում՝ իբրև վիպական նախնիների մասին սրբազան պատմություններ:

О НЕКОТОРЫХ РИТУАЛЬНО-МИФОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ ГЕРОИЧЕСКОГО ЭПОСА “САСНА ЦРЕР”

САРГИС АРУТЮНЯН

Р е з ю м е

Героический эпос “Сасна црер” делится на три типологические группы–мушскую, моксскую и сасунскую. Моксские сказания отличаются исключительными поэтическими особенностями и имеют своеобразные заупокойные прелюдии Вогормики (*Ողորմիք*), что является результатом сакральности и ритуальности этих сказаний. Вогормики, в которых повествуется о подвигах эпических героев,– ритуальная форма поминовения предков. В этом проявляется сходство с народными скорбными песнями. В основе сюжета героического эпоса лежат три древнейших мифа–о божественных близнецах, боге или герое грома и молнии и боге Миhр–Митре. Героический эпос, как в Моксе, так и в других типологических группах воспринимается сказителями как священные истории о предках.

ON CERTAIN RITUAL AND MYTHOLOGICAL PECULIARITIES OF THE HEROIC EPIC *DAREDEVILS OF SASSOUN*

SARGIS HARUTYUNYAN

S u m m a r y

Typologically the Armenian oral epic *Daredevils of Sassoun* can be divided into three ethno-geographical groups: of Mush, Sassoun and Mokq. The Mokq group famed for its antiquity and remarkable archaic poetics opens with a unique prologue known as *voghormi (Lord, grant mercy upon …)*. Here the teller wishes divine mercy on the main heroes of the epic as his/her once alive ancestors. Mercy is being asked for the repose of the souls of the listeners’ late parents too. Three ancient myths (myth of the sacred twins, the thunder God, and Mihr or Mithra myth) shape the basis of the epic. They are combined through commonality of themes and entwined historical traditions. The epic in all its typological groups is viewed by the tellers as sacred stories about ancestors.